Հայտարարություն

«Նոր Գեղիի ակադեմիկոս Գ.Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ հետևյալ առարկաների, մոդուլների և մասնագիտությունների դասախոսական պաշտոնների համար՝

1. «Համակարգչային օպերատորություն», ծանրաբեռնվածությունը՝ 360 ժամ
2. «Ինֆորմատիկա», ծանրաբեռնվածությունը՝ 576 ժամ
3. «Ֆիզիկական կուլտուրա», ծանրաբեռնվածությունը՝ 324 ժամ
4. «Ֆիզիկա», ծանրաբեռնվածությունը՝ 576 ժամ
5. «Ռուսաց լեզու», ծանրաբեռնվածությունը՝ 474 ժամ
6. «Հաղորդակցություն», ծանրաբեռնվածությունը՝ 200 ժամ
7. «Աշխատանքայինգործունեության ընդհանուր հմտություններ», ծանրաբեռնվածությունը՝ 162 ժամ

Նշված առարկաները կարող է դասանդել այն անձը, որը ստացել է մանկավարժական համապատասխան որակավորում (բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճանով) կամ ունի բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ:

1. 0811.01.5 «Գյուղատնտեսագիտություն», ծանրաբեռնվածությունը՝ 762 ժամ
2. 0811.06.5 «Պաշտպանված գրունտի կենսատեխնոլոգիա», ծանրաբեռնվածությունը՝ 612 ժամ
3. 0812.02.5 «Բուսաբուծական արտադրանքի պահպանում և վերամշակում», ծանրաբեռնվածությունը՝ 810 ժամ
4. 1041.01.5 «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում», ծանրաբեռնվածությունը՝ 402 ժամ
5. «Մենեջմենթ», ծանրաբեռնվածությունը՝ 162 ժամ

Նշված մասնագիտություններում ընդգրկված մասնագիտական ուսումնական մոդուլները կարող է դասանդել այն անձը, որը ստացել է դասընթացի բնույթին համապատասխանող միջին մամասնագիտական կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում, կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ՝ եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն Հայաստանի Հանրապետությունում չի իրականացվում: Հատուկ մասնագիտական դասընթացները վարող դասախոսների համար մասնագիտական աշխատանքային փորձի առկայությունը ցանկալի է:

Դասախոսի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում (Ձև 1),
2) կրթության մասին հաստատող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
3) անձնագիր (բնօրինակը և պատճենը),
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
5) ինքնակենսագրություն (Ձև 4)
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետությունում համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիները.
8) Հայաստանի Հանրապետությունում արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ (բնօրինակը և պատճենը),
9) Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
10) Ըստ պաշտոնի հավակնորդի հայեցողության՝ գիտամանկավարժական գործունեությունը բնութագրող այլ փաստաթղթեր:

Մրցույթին մասնակցելու համար դիմումները (փաստաթղթերը բնօրինակներով), ներկայացնել 2022 թ. օգոստոսի 10-ից մինչև օգոստոսի 23-ը ներառյալ՝ ժամը 10:00-ից 16:00-ն (բացի շաբաթ, կիրակի և հանգստյան օրերից), «Նոր Գեղիի ակադեմիկոս Գ.Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի մրցույթաի հանձնաժողովին

(հասցեն՝ ՀՀ Կոտայքի մարզի գ. Նոր Գեղի, փողոց Ուսանողական 5):

Մրցույթը տեղի կունենա օգոստոսի 29-ին՝ ժամը 11:00-ին, Կոտայքի մարզի «Նոր Գեղիի ակադեմիկոս Գ.Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ում:

Մանրամասների համար զանգահարել 099 32 35 45, 077 15 88 27

ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ